

Պոլիգրաֆիայի համար
 Տպարան 10
 Վերահսակայ
 Մրհանակի կանխի համար
 Վերահսակայ 12
 Վերահսակայ 6
 ԱՄՆԻԿԻ ՎՃԱԿԻՆԻ
 —) —
 Գրութիւնք եւ չեն տրուիր
 —) —
 Իրանուցեալ տպարան 2) սակարկիւն
 Իրանուցեալ տպարան 20 Օլոգ
 զեղէ կըլնայ :

ՇԱՐԺՈՒՄ

Редакция на вѣстникъ
 «Шаржумъ»
 Варна.
 Редакция du journal
 «Charjoun»
 Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ - ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵԲՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՔԱԹ ՕՐԵՐԸ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

Отговорникъ: А. СУКЯСОВЪ.

ՁԵՁ ՀԱՍԿԱՆՈՒՄ ԵՆՔ

—) —
 Մի տեսակ ախտ է դարձել աճէն մի շնչին դէպքում խօսել հայ ժողովրդի կողմից, դիմել նրան և երբեմն էլ նրա հասարակական շնորհակցանակ :
 Մի տարի առաջ, մի խումբ բերեալաբան մարդիկ խաղալիք դարձած մի քանի սրիկաների ձեռքում, սպառնալիքներ էին ուղղում այս և այն յեղափոխական մարմին կամ անհատին «Միութիւն» բազմաբովանդակ, բայց առաձգական խօսքը պատրակ դարձնելով :
 Ի հարկէ հայ ժողովրդի միջինաւոր մասը բոլորովին տեղեկութիւն չունէր այդ սգեղ գործերից, որ կատարում էին արտասահման գտնված հայերի փոքրամիջ մասը՝ գործիք դառնալով զանազան մրտահարուներին ձեռքերում : Եւ ի՞նչպէս կարող էր հայ ժողովրդի մեծամասնութիւնը տեղեկութիւն ունենալ թէ այս ինչ կամայն ինչ անարժան անձնաւորութիւնը խաղալիք է իր անուան հետ, քանի որ նա ընկղմված է ստրապիլի վշտերի մէջ և գտնվում է այնպիսի կաշկանդված վիճակում, որ անկարող է հետեւել և հասկանալ թէ ինքնակոչ ժողովրդային փաստաբանները ի՞նչ ճառեր են արտասանում արտասահմանեան ազատ երկրներում և ի՞նչ անպատուաբեր գործեր կատարում :
 Այսօր էլ երեւան են եկել մի շարք մարդիկ, որոնք իրանց սգեղ գործերը ծածկելու նպատակով, դերասանական բացական չութիւններով դիմում են նոյն հայ ժողովրդին, որը, սրանց գոյութիւնը անգամ չը գիտէ, աւելի լուրջ խնդիրներ ունի իր առջեւ : քան այս կամ այն դժգոհ և, իբր թէ, զուր հալածված անհատների անձնական վիճակը :
 Ճամբարի զարմանալի յանդէնութիւն ունեն մեր այդ սուտ և և գոյնզոյն ճգնաւորները, որոնք անմեղ զոհեր են ներկայանում հայ հասարակութեան առաջ և փարիսեցիական աղաղակներ

արձակելով զոչում են — «ժողովուրդ, ես անմեղ եմ և զուր եմ հալածվում, ես կատարել եմ և կատարում եմ իմ պարտքը, վատերը ա՛յ նրանք են» : ճիշտ երուսաղէմի տաճարում ազօթով, փարիսեցու նման, որ Աստուծուն մատնացոյց էր անում իրանից մի քիչ հեռու հեղութեամբ ազօթով մաքաւորին :
 Այդ պարոնները մի՞թէ այնքան միամիտ են, որ չեն հասկանում թէ այդ տեսակ կոչերը կարգացող հայը առում է, «եթէ սոխ չես կերել, ինչո՞ւ է բերանդ մոճուում» :
 Բարեբախտաբար, այսօր հայ ժողովուրդը այնքան էլ միամիտ չէ և հասկանում է իրան դիմող ճարտիւֆ դերասանների փոքր ցաւը և կարգալով դրանց մեծադուրդ կոչերը ժպտալով առում է :
 Պարոններ, մաքրեցէք ձեր բերանը, սրբվեցէք և ապա դիմեցէք մեզ ձեր խօսքերը : մենք ձեզ չե՛նք հատարում, դուք կեղծ էք : Ճակատագիրը հարւածեց ձեզ բոլորովին արդարացի կերպով, զրկեց դիրքից և ձեզ համար, սնտանելի պայմաններ ստեղծեց : Դուք, որպէս զի կարողանաք ձեր ոտքերի տակի հողը ամրացնել, ձեր ընկած պատիւը վերականգնել, դիմում էք մեզ, կեղծ արցունք էք թափում մեր ցաւերի վրա, որ կարողանաք մեր համակրութիւնը դրաւել, մեր աջակցութիւնը ձեռք բերել : որովհետեւ, առանց մեր ամենաշնչին աջակցութեան և առանց մեզ, դուք ոչինչ էք, արհամարված ու մրտոված զէրօններ էք : Չուր ճիգ էք թափում : մենք ձեզ հասկանում ենք և արհամարում :
 Իսկ մենք մեզ թոյլ ենք տալիս տեղացնելու : հայ ժողովուրդը ձեզ չէ ճանաչում, որովհետեւ դուք նրա այն դաւակններն էք, որոնք սեփական դիրքի և հանդատութեան համար պատրաստ են զոհել ամէն ինչ, թէ սեփական խիղճ և թէ աղջային պատիւ : Այսուհետեւ թէ ձեր կոչերը, թէ ձեր աղաչանքը և թէ

ձեր հնացած քարոզները կարելի էր ընդհանուր շունեն հայի համար : նրա առջեւը աւելի լարեւոր գործ կայ, ձեզնով զբաղվելու ժամանակ չունի :
 ՎԱՐՊՕ

ԻՆՔՆԱՊԱՇՏՄԱՆՈՒԹԻՒՆ

—) —
 Դ.
 Այս օրեր նամակ մը ստացայ գաւառի ընկերէ մը, որ յուսալիբ անհամբերութեան պարոյկով մը կը հարցնէր. «Ի՞նչ կընէ արտասահմանի հայութիւնը, ի՞նչ կը խորհրդածէ մեր կացութեան մասին ազատ հայ մամուլը» : Ու երկարօրէն բացատրելով հայրենիքի ներկայ վիճակը, հայ ժողովուրդի արդէն իսկ տառապազին կեանքին դէմ լարուած դժոխային դաւերը՝ կը վերջացնէր. «Ինքնապաշտպանութեան անմիջական միջոցներ հարկ են մեզ, զէ՛նք : ահա՛ մեր գերագոյն պէտքը» :
 Մեր խորագէտ «Եղափոխականները» դիւանագիտօրէն գտած են այդ պէտքը գոհացնելու կարուկ միջոցը : Տարւոյս սկիզբը՝ Կ. Պոլսոյ դեսպաններուն զրկած են յիշատակագիր մը, որու մէջ վերջնագրի շնչով պահանջներ են եւրոպայի վեց մեծ պետութիւններէն «կամ բարեկարգութիւն, եւրոպական հսկողութեամբ, կամ զէնք ինքնապաշտպանութեան համար» : Այդ յիշատակագրի պատասխանը իրենք դեռ կը սպասեն . . . բայց հրաշալի արդիւնքին լուրերը կը հաղորդէ նամակագիր ընկերս :
 Բազմազգաղ փատիշախը իր մեծագործութիւններու արձակուրդը լրացուցած՝ աւելի մեծ գործերու կը պատրաստուի : Չորրորդ բանակը Մովզէրեան հրացանով կը գիւնուի, իսկ նախկին Մարթինի հրացանները բրդերուն ու թուրք խոժանին կը բաշխուին : Սվազի նահանգին ամբողջ Մահմետականութիւնը զինելու ստիպողական հրահանգներ տրուած են Պոլիսէն : (Չըլլա՛յ թէ ծուռ հասկըցուած լինի յիշատակագիրը . . . , պէտք է կրկնել) Սիստէմական շարժում մը կը տիրէ ամենուրեք իսլամներուն մէջ, որոնք քաջախելուած իրենց դիրքին յաղթանակներէն կառավարութեան մէկ ակնարկին կը սպասեն անհամբեր՝ արիւնի ու թալանի եղանակով վերսկսելու : Իսկ Ախլաթի մէջ ստիպականութեամբ մը, զէնքեր խուզարկելու պատրուակով հայ գիւղերը կարելի են : Տիրանապոլսի զինուած ամբոխը բացարձակօրէն կոտորած կը սպառնայ, հայերը վախնալով խանութները կը

փակեն և կառավարութիւնը ձեռքառաւարութիւններ կընէ դարձեալ հայերէն, իբրեւ բարեկարգութիւնը վտանգողներ :
 Այս «խելացի մտածութիւններ»ուն մէջ Սուլթանը չի մոռնար իր հին խաղը, խաբէութեան ստորին միջոցը : Իր վարձկան պատուիրակները եւրոպա կը փութան առատ խոստումներով հայերու ինքնապաշտպանութեան հոսանքը իր ակէն կտրելու : Եւ մեր Մարտեան պարագլուխը, թրքահայոց ինքնակոչ պաշտպանը, որ պէտք չունէր արդէն այսպիսի պատուիրակութեան մը, թիւրքերու զղջումը փաստաբանելու համար զլուխը պատէ պատ զարնելէ յետոյ կը վճռէ, «Ինչ որ մենք այժմ կրնանք ընել զինաշարք է, քանի որ Օսմ. կառավարութիւնն ալ զինազարթի նշանը կուտայ» :
 Վերջերս Թիֆլիզ հասած՝ Վանի Ամերիկեան միսիոնար Մր. Ալէն Հայաստանի կացութեան մասին սա եղբակացութիւնը կընէր :
 —Եթէ ներկայ տագնապալի օրերը զիտ մի երկու տարի եւս շարունակուին՝ ամբողջ թրքաց Հայաստանի հայ բնակիչները՝ թէ՛ բարոյական և թէ՛ տնտեսական այնպիսի ծանրագոյն հանգամանքների կենթարկուին, որ այլ եւս շատ ուշ եւ նոյն իսկ անկարելի կը լինի վերականգնելը :
 Իսկ Արփիար երկայնամտօրէն կը շարունակէ. «Իմաստուն ուղղութեան մը հետեւելով Դուռը եթէ զինազարին պայմանաժամը երկարել ուզէ, կը դիւրացնէ զինազարէ զինազար մինչեւ վերջնական համաձայնութեան ժամանակը» : Ու այս տագնապալից օրերուն, մահուան արհաւիրքներուն մէջ խաղաղ «վերընձիւղում» կը զատանցէ :
 Հիմա հայրենիքի հայ ժողովուրդը ընդհանրապէս ա՛լ յոյսը կարած օտարի օգնութեանն, այս դժոխային կացութեան հետեւանք՝ կեանքի յուսահատ արհամարհանքով մը մտադրած է մեռնիլ օրհասական կռուի մէջ : Այս բարեղէպ տրամադրութիւնը, զոր յեղափոխականը շատ ջանաց ներշնչել եւ ի վերջոյ թշնամին ստեղծեց անխոհեմութեամբ՝ հզօրացէս պիտի մղէ ժողովուրդը ինքնապաշտպանութեան կողմին, վրէժնորութեան սուրբ ուխտին և ազգային վերածնութեան : Ու «Իրենց Ինքնապաշտպանութեանը համար մզած կոխներուն մէջ հալածեալ ազգութիւնները կը յաղթանակեն» : (Նոր-կեանք թիւ 14) եթէ սակայն իւրաքանչիւր անհատ ճգնաժամին մեծութիւնը ճանչնայ, և իւր նուիրական պարտաւորութիւնները կատարէ, իսկ

այդ պարտաւորութիւնն մեծ բաժին մը ունին արտասահմանի հայերը :

Ե .

«Ի՞նչ կընէ արտասահմանի հայութիւնը, ի՞նչ կը խորհրդածէ մեր կացութեան մասին ազատ հայ մամուլը» : Որչա՛փ ցաւալի, որչա՛փ յուսահատեցուցիչ է զժբաղդ նամակագիրի հարցումին պատասխանը :

Մեծ մասամբ վտարանդի, յուսահատ տարրերէ բաղկացած արտասահմանեան հայութիւնը օտար երկրի մէջ անգործութիւնէ սրանեղած իսկ հայրենիքին ուղղուած աչքերը արեւնէն սարսափահար՝ բոլորովին չուարած է : Եւ հոգեկան այդ տարտամ վիճակը վարպետօրէն կը շահագործեն անխիղճ հրապարակագիրներ, որոնք իրենց նողկալի մաղասալափութիւններով կը ճգնին արտաստուրի վրկութեան գործին հաւատարիմ մնացած զինուորները եւ ամբողջ վարդապետութիւն մը կը ստեղծեն ազգաբաւ խոհեմութեան :

Արտասահմանեան խղճամիտ մամուլի գերագոյն պարտքն է պայքարել այդ ներքին դիմակաւոր թշնամիներու դէմ, վառ պահել յեղափոխական փրկարար գաղափարը մեր մէջ, արծարծել զոնգութեան ոգին, հերոսութեան զգացումը եւ ազգային փառքի այն նախանձաւորութիւնը, առանց որու ազգերը կը վերջանան :

Թո՛ղ ժողովուրդի արիւն ու ոսկորէն իրենց փառքեր կանգնելէ յետոյ դասալիք եւ խոհեմութեան դիմակին ետեւ իրենց ուրացութեան ամօթը ծածկող յեղափոխականները իրենց թուարանական ճշգրութիւններով միմիտները համարեն : Ճկուէն ոճի մը սիրէնայական թրթուռներէն հրապուրուող անխորհուրդներ թո՛ղ արձագանգօրէն կրկնեն հակայեղափոխական զատանցանքները : Գանի դեռ գոյութիւն ունին մեր կողմը ստեղծող պայմանները, ցորչափ մեր հարազատ եղբայրներու դահիճները ողջ կը շրջին ու յոխորտանքով կը ցուցնեն իրենց եսթաղաններուն վրայ դեռ թաց հայ արիւնի թիծերը . մենք պիտի կրկնենք դրականօրէն հայրենիքի արիւնտ հողէն թոած կոչը Արեւի, որ մեր ազգային ինքնապաշտպանութեան գերագոյն պէտքերն մարմնացումն է :

Ինչպէս երեւում է, կառավարութիւնը դադարեցնելով նպաստը, հացի թանկութիւնը եւ նուազութիւնը կրկին երեւան է գալիս : Այս անգամ պարսիկ խուժանը մտադրում է աւելի բուռն միջոցներով դիմել ներկայ ամսի 11ին բազարը դարձեալ փակելու է, քաղցած ժողովուրդը հազարներով դիմում է Սիյոյի Հասկա կոչված ուխտատեղին, հաւաքվում է տանեակ հազարներով եւ սկսում է նոյն դիշերը մինչեւ-առաւօտ Այլու՛ն, Այլու՛ն աղաղակել . . . : Լուսարացին հաւաքվող խուժանը յարձակում է գործում «Նիզամ-իւլ-Իւլէմա»ի տան վրայ : Այս անձը քաղաքին ամենահարուստ եւ երեւելի կարողացողներէն է, ունի բազում գիւղեր, կալուածներ եւ հիւանալի կահկարասիքով զարդարված ապարանք : Այս կղերականը, ինչպէս ուրիշներ, էժան գնով հաւաքում եւ ամբարում է հացահատիկները եւ յետոյ բարձր գներով վաճառում . սրա եւ իրան նմանների ազահութեան պատճառով հացը սղում է :

Պէտք է գիտենալ, որ քաղաքում 80,000ի մօտ տուն պարսիկ բնակութիւն կայ, որի երեք չորրորդ մասը ապրում է օրը օրին՝ լոկ ցամաք չոր հացով, ամենավերին ստիճանի խղճալի ու թշուառ վիճակի մէջ . երբ այս հարիւր հազարներով չքաւոր ժողովուրդը առանց հացի քաղցած է մեռնում, կարող էք երեւակայել թէ ի՞նչ ծանր հետեւանքներ է ստալ գալիս . . . :

Եւ ահա Թաւրիզի համար չուշացաւ այդ վտանգաւոր օրը :

Պարսիկ ժողովուրդը իրա հոգեւորականներին հլու հպատակ էր նկատվում, մտնոտանդութիւնը եւ կոյր հետեւողութիւնը իրան թոյլ չէր տալիս գանդաւորելու եւ զժողովութեան ցոյց անելու նրանց դէմ : Բայց այսօր հացի խնդիրը մի տարօրինակ երեւոյթ է ներկայացնում . պարսիկ սղեւ եւ մտնոտանդ ժողովուրդը իրա հոգեւորականների դէմ ձայն է բարձրացնում . ոչ միայն բողոքում է բարձրագոյն, այլ եւ զէնքի էլ է դիմում : Պարսկաստանը եւ պարսիկ ժողովուրդը ճանաչողների համար այս երեւոյթը անսովոր մի բան է . մինչեւ այս օր պարսկ հոգեւորականութիւնը իրան հետեւից քաշ էր տալիս պարսիկ հարապակութիւնը, եւ այդ ժողովրդական ուժով դիմադրում էր կառավարութեան, արգելք էր լինում ամէն կերպ առաջադիմական գործերի եւ կարգադրութեան համար : Թէմպէքուի եւ ծխախոտի ընթիլ վերածելու գործը՝ հոգեւորականութեան ուժգին դիմադրութեան պատճառով Պարսկաստանում չիրագործվեց . կառավարութիւնը պարտաւորվեց ջնջել անգլիացիների հետ այդ մասին կապած պայմանագրութիւնը եւ դատապարտուեց հարիւր հազարներով վնասը սուժել, որը մինչեւ այսօր չէ կարողացել վճարել . . . :

Ահա այսօր պարսիկ ժողովուրդը, կարծես ուշաբերուած, հոգեւորականները լուծը թօթափում եւ նրանց դէմ է կանգնում փոխադարձաբար : Այս դրութիւնից կարող է կառավարութիւնը օգտվել եւ ժողովուրդին ուժ տալով, կտրել հոգեւորականների դարաւոր հեղինակութիւնը . բայց մենք կասկածում ենք պարսիկ կառավարութեան վրայ . . . , յայտնենք, որ նա պիտի կարողանայ օգուտ քաղել առիթից :

Վերջապէս, զրպոված պարսիկ խուժանը օգոստոսի 12ին յարձակվում է

«Նիզամ-իւլ-Իւլէմա»ի տան վրայ, ուղում է ներս խուժել եւ չը խնայել ապրողներին, թալանել գոյքերը :

Այդ օրը չէ յաջողվում ժողովուրդին մօտենալ այդ տան, ուժգին դիմադրութեան է հանդիպում : Տան տէրը ժամանակին գիտնալով ժողովուրդի տրամադրութիւնը, իրա մօտ էր հաւաքել բոլոր սէյիդներին, որոնք իրանց մեծաւորն սուրը պաշտպանում էին քրդերից խուժանի վրայ զէնքեր արձակելով : Առաւօտից մինչեւ կէս օր զէնքերի տրաքոցի ձայները լսվում էին, բայց յարձակվող խուժանից, ոչ ոք չէր համարձակում անից փողոց դուր գալ, մանաւանդ հայերը սարսափով քաշուել ու թագնվել էին իրանց աներում : Այդ օրը ժողովուրդից սպանվում է մօտաւորապէս 80—40 հոգի :

Ժողովուրդի կատաղութիւնը ծանր սասիճանի էր հասել, նա թողնում է «Նիզամ-իւլ-Իւլէմա»ի տունը եւ գնում թալանել այն սէյիդների տները, որոնք երդիքից զէնք էին արձակում : Պոյն օրը կառավարութեան կողմից մի պաշտօնեայ է գալիս «Նիզամ-իւլ-Իւլէմա»ին եւ ստիպում է, որ ապարանքի դռները բաց անէ խուժանի առաջ : «Նիզամ-իւլ-Իւլէմա» պաշտօնեային չէ ընդունում, առաջարկելով, որ նախ կառավարութիւնը խուժանը ցրուէ : Կառավարութիւնը այս միջամտ վրայ զօրքերով սուրը պաշարել է տալիս :

«Նիզամ-իւլ-Իւլէմա» գիշերով իրան մարդերի հետ փախչում է մօտաւոր մի գիւղ :

Օգոստոսի 13ին, հինգշաբթի լուսաբացին պարսիկ ժողովուրդը կրկին յարձակում է գործում «Նիզամ-իւլ-Իւլէմա»ի տան վրայ, եւ այս անգամ դիմադրութեան չը հանդիպելով խորտակում է զոնները եւ ներս խուժում : Մի ժամուայ ընթացքում այն ահագին ապարանք հիմնովին քայքայվում եւ աւերակ է դառնում . . . : Ամենաթանկ իրերից, ամենաարժէքաւոր նիւթերը մըջիւնի նման ժողովուրդը կրում ու տանում է : Պոյն իսկ տան զոնները, սրեւները եւ պատուհանները սեղից հանում եւ տանում են :

«Նիզամ-իւլ-Իւլէմա»ի տունը քար ու քանդ անելուց յետոյ, ժողովուրդը յարձակվում է մի ուրիշ հարուստ գերդաստանի տան վրա՝ «Ալա-էլ-Միւլէք», այս գերդաստանին պատկանում է Պոլսի պարսկական դեսպանը, որին հաւած վնասը 50,000 թուման են հաշվում : «Ալա-էլ-Միւլէք»ի տունն էլ միեւնոյն կերպով թալանելուց յետոյ ժողովուրդը անցնում է մի ուրիշ հարուստ գերդաստանի ապարանքը թալանել : Այս ապարանքը պատկանում է «Ալէքի-իւլ-Միւլէք» կոչուած գերդաստանին, որը կառավարութեան տուել է բարձր պաշտօնեաներ :

Պարսիկ ժողովուրդը, այս երեք ապարանքները եւ սէյիդների հինգ տները թալանելուց յետոյ, մի քիչ հանդարտում է եւ ցրվում :

Խառնակութեանց միջոցում ժողովուրդի գնդակներից բազմվել է մի սէյիհ (Մուհամէտի ջեղից են համարվում սէյիհները) «Մեր Սալի Սէյիհ» անունով : Ընդհանուր վնասը 600,000 թուլլի են հաշվում :

Այժմ խօսում են, թէ Պարսիկ հոգեւորականները չը կարողանալով տանել ժողովրդի կողմից իրանց եղած այս նախատանքին, ուղում են իրանք էլ յարձակել բազարի վրայ եւ թալանի սալ : Պոյնպէս հաւատացնում են, թէ շրջակայ Պարսիկ գիւղերի բնակիչները հազարներով քաղաք են գալիս եւ տներում թա-

գնվում, յարմար րոպէին դուրս գալու եւ թալանի մասնակցելու :

Վերջապէս, թէ եւ բազարը այժմ բաց է, թէ եւ ամեն ոք իրա գործին է հետեւում, սակայն ա՛հ ու սարսափը տիրում է ամենքի սրտում, մանաւանդ հայերի սրտում : Պոյն օրուայ հետ նոր զէնքի են սպասում, որովհետեւ հակառակ այսքան խառնակութեանց, սակաւին հացը չէ էժանացել :

ՄԻՐՁԱ

Ռուսոյն, 6 Սեպտ.

Ասկէ քանի մը ամիս առաջ հայ ժողովուրդին մէջ լուր մը տարածուած էր թէ Օրմանեան Պատրիարքը իր փառամոլ ձրգտումները զոհացնելու համար նպատակ ունի Սսի կաթողիկոսութիւնը Պոլսի փոխադրել, եւ զայն Պոլսոյ Պատրիարքութեան հետ միացնել : Լրագրութիւնն ալ փոժամանակին փութացած էր մասնանախը ընելու ազգային վտանգը որ կրնար ծագիլ այդ ձախող կարգադրութեանն :

Տեղւոյս Արթ. Տ. Կարապետ Աւագ քահանան փափագելով խնդիրը լուսաբանել, մասնաւոր գրով մը Պատրիարքարան գիւծակ պաշտօնական տեղեկութիւններ խնդրած էր այս մասին : Օրմանեան Պատրիարքը պատասխանելով Տէր Հօր նամակին, կը յայտնէ թէ Պուլկարիոյ մէջ շրջած այդ լուրը անհիմն է, եւ կը յանձնարարէ Ն. Արժանապատուութեան հազորդելու այս կողմերը ընակող մերայիններուն որ բնու հաւատ եւ կարեւորութիւն չընծային այդ տարածայնութեան :

Ուրախալի է որ Օրմանեան Պատրիարքը անգոյ եւ անհիմն կը յայտարարէ այդ լուրը . բայց խնդիր է գիտնալ թէ լուրը նախ անհիմն էր, թէ ետքէն ստացած այդ գոյնը, իր գէմը գտնելով ազգին միահամուռ հակառակութիւնը :

ԳԻՐՈՒԿ

Լսունակա (Կիպրոս), 27 Օգոս.

Կովկասի իշխանութիւններէն հալածուած ոռու պղանդաւորներ (Տուխուպուր) ամսոյս 12ին Կիպրոս հասան : Ասոնց թիւը առայժմ հազարը կանցնի, բայց շատ հաւանական է որ մօտերս ուրիշներ ալ գան : Չը կարծուի որ այս տարագրեալները բարեկեցիկ վիճակ մը կարողանան գտնել այս տեղ . որովհետեւ տեղւոյս կլիման, հողի անարգասաւորութիւնը եւ սրիչ հանգամանքներ աննպաստ են : Ասոր փորձը տուին կարգ մը չէրքէզներ որ 30—35 տարիներ առաջ հոս հաստատուել ուղեցին, շատ աշխատութիւն տուին եւ սպկայն բազմաթիւ զոհեր տալէ ետքը հեռանալու ստիպուեցան :

Բաղաքիս հայ ընթերցարանը որ մինչեւ վերջին ատեններս անորոշ դրութիւն մը ունէր

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Թաւրիզ, 19 Օգոս.

Հացի խնդիր եւ վերջին խուժութիւնները. — Պոլսի լուր. — Դրպարողական խնդիր եւ հայ Ձուլան (Ն) . — Յեղափոխականի մը խոստովանանքը . — Պոլսի առաջնորդն եւ նրա առաջին գործը . — Հոստոսի խրնդիր :

Հացի խնդիրը միայն թղթակիցների միտքը չէ զրադեցնում . . . : պարսիկ ժողովուրդն էլ հացի նուազութիւնից տառապում է : Սրանից երկու շաբաթ առաջ հացի չգոյութեան պատճառով քաղցած ժողովուրդը մի ցոյց կազմակերպեց եւ յարձակուեց հացագործներին եւ այլ կրպակների վրայ . բազարը իսկոյն փակվեց, չորս օր փակ մնալու պայմանով : Կառավարութիւնը միջամտելով իրա կողմից մասնաւոր գումարներ բաժանեց հացագործներին, որպէս զի էժան գնով վաճառեն հացը . . . :

չնորհիւ երկու անձնուէր երբ-
տասարդներու Պ. Պ. Մարի և Վ.
Մարտիրոսովի ջանքերուն, աւելի
հաստատուն կուտանի մը վրայ
գրուեցաւ: Հա՞րկ է ըսել թէ այս
ընթացքարանը ուր մերթ օգ-
տակար ատենախօսութիւններ
ալ կըլլան, որքան կարեւոր ծա-
ռայութիւն մը մատուցանելու կո-
չուած է տեղւոյս հասարակութեան
զարգացման գործին մէջ:

Գեղամ-Աշոտ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՅԻՇՍԱԿՆԵՐ

—)(—

Յեթի պատճառած այդ բարբ
աղէտներին՝ հայերը իրենց գաղ-
թակահոլութեամբ տեղի կուտան,
իրենց սուն, տեղի, արտ, ու հո-
գերը երեսի վրայ ձգելով, ու-
րոնց ճեխը կը տիրանայ Մէհմէ-
տի օրինաց զօրութեամբ: Իսկ
Խիզանու քաղաքի մէջ բնակող
հայերը թէև խեղճ ու կրակ կա-
ցութեան մը դատապարտուած,
բայց աւելի դիմանալով ամեն
նեղութեանց, չեն ուզեր շտտով
լըքել անմոռաց յիշատակներով
լեցունք այն վայրը՝ ուր առաջին
անգամ իրենց աչքերը լոյս տե-
սեր ու իրենց պաշտելի Ս. Յա-
րութիւն հոյակապ տաճարին կի-
սակործան կամարի ներքեւ մեր
նախնեաց անունը փառաբանե-
ր են: Խաֆա Շեխին կը յաջորդէ
ձէլալէտին: Անոր անմիջական
գործը կը լինի քաղաքի մէջէն
իրեն մօտիկ քանի մը սրուն
քաղաքներ հայերը վտարել, ու
շտտով կը յաջողի անոնք ամեն-
քնալ իրենց ընտանիքներով Հա-
յաստանի հեռաւոր անկիւնները
կը գաղթեն: և կը մնայ մինակ
այդ պառաւ հայ կիւնը, որուն եր-
կու տղաքները վարդան ու կիրա-
կու ու աղջիկը նարկիկ կրօնք-
նին փոխելով Մահմէտականա-
ցած էին թէ և, բայց ինքը՝ այդ
տարաբախտ հայ կիւնը՝ իր հայ-
րենիքի այդ ահեղ աւերումներ
ու դաւակաց այդպէս ճշակոտոր
լինելէն անվհատ հաւատքի ան-
ընկճելի զօրութեամբ՝ ճշմարիտ
հայ կիւնը տիրալ կը պահէր այդ
աւերակ, ամայի ու քրդական
վայրագութեանց բուն դարձած
հայրենի քաղաքի մէջը: Ամեն
չարաթ իրիկուն երկու կայծ
կրակ խեցիկի մը վրայ դրած,
քիչ մը իւղ հողէ ճրագի մը մէջ
լեցուցած, կերթար յուսելու ու
խնկարկելու Ս. Յարութիւն Մայր
տաճարի կիսաքանդ կաթողիկ-
եան ու խորանը, որուն քարերէն
շատերը ճեխ ձէլալեախին իր ա-
նուպայ մաղդոց ձեռքով իր թէք-
քիէն փոխադրելով բնակարանի
շինութեան գործածած է: և այդ
հայ ծերուկ կիւնը, որուն զա-
ւակները Մուհամմէտի կրօնին
փարած էին, ոչ միայն իր
հայրենական կրօնի պինտ բռնած
էր, այլև իր բնական կեանքն
անձնագոհ մայր՝ իր պահապա-

Ք Ր Ո Ն Ի Կ

—)(—

Ողբացեալ Գրիգոր Արծրունիի
եղբայր, և «Մշակ»ի հրատարա-
կիչ բրոքէստ Անդրէաս Արծ-
րունի, թոքերու շտտով հի-
ւանդութենէ մը բռնուած է և
կը դարմանուի Հօհէնհօնէֆի
գերմանական հիւանդանոցին
մէջ:
—Կաթողիկոսը վերագարձեր է
Շուշի, ուր քանի մը օր մնալէ
ետքը Տաթևի վրայով էջմիածին
պիտի ուղեւորի:
Կրտսի թէ առաջիկայ աշնան
մտադիր է Բեթերսպուրկ եր-
թալ:
—Կովկասէն կը հաղորդեն թէ
ներքին գործոց նախարարու-
թիւնը իրաւունք տուեր է մեր
կաթողիկոսին դատարան դիմելու
այն դէպքերուն, երբ, կըթա-
կան նախարարութեան պաշտօն-
եայները գրաւեն այնպիսի եկե-
ղեցական ստացուածքներ որոնք
չեն պատկանիր հայոց եկեղե-
ցական-ծխական փակուած դըպ-
րոցներուն:
—Կիւրոսի աղգային կըթա-
րան-Որբանոցին խնամակալու-
թիւնը նամակ մը ղրկելով
«Մշակ»ի, կը հերքէ «Արձա-
դանք»ի յունուար 14ի թիւին
մէջ որբանոցին և անոր տեսուչ
Պ. Վահան Քիւրքճեանի նկատ-
մամբ հրատարակուած աննպաստ
թղթակցութիւնը, և կաւելցնէ
թէ Պ. Տեսուչը արժանաւոր է իր
վրայ դրուած վստահութեան:
—Լաւնակաի (Կիւրոս) նորա-
հաստատ հայ ընթերցարանին
վարչութիւնը կը խնդրէ բոլոր
խմբագիրներէն, հեղինակներէն
և թարգմանիչներէն որպէս զի
հաճին իրենց հրատարակած
թերթերէն և գրքերէն մէջ մէկ
օրինակ ուղարկել նոյն ընթեր-
ցարանին:
—Սոյ կաթողիկոսական խնդ-
րին չափ անորոշ է նաև Իզմիր-
լեանի Եգիպտոսի առաջնորդու-
թեան խնդիրը: Խառն ժողովին
չէ ներկայացուած տակաւին եր-
կաթեայ Պատրիարքին գրու-
թիւնը որով կը յայտարարէ թէ
չհրատարակելու Եգիպտոսի առաջ-
նորդութենէն: Եգիպտոսի հա-
յերը կարկուտի պէս նամակ կը
տեղացնեն Պատրիարքարան:
—Պուլկարական Օթղիվ լրա-
դիրը կը գրէ թէ Ռուսչուքի
պուլկար առեւտրական պանդախին
բաժնեթղթերը կէս առ կէս ին-
կած են և թէ նոյն հաստատու-
թիւնը սնանկանալու վրայ է:
Բաժնետէրերը միթիւնկ մը պիտի
գումարեն Ռուսչուքի մէջ, պան-
դախին հաշուեյարգարութիւնը
պահանջելու նպատակով:
—Ձէյթունի օգնելու համար
ամերիկացի Պ. Փափուզեանի ը-
րած առաջարկը յայտնած է-
ինք արդէն: Հանգանակութիւ-
նը բացուած է վստահելի անձե-

րէ կազմուած յանձնախմբի մը
ձեռքով: Նուիրատուութիւնները
կարելի է ղրկել նաև Տիգրիսի և
փրատի վարչութիւններուն:
Երբ հանգանակութիւնը գոցուի,
գումարը Հալէպի ամերիկեան
կամ անգլիական հիւպատոսին
ձեռքով Ձէյթուն պիտի ղրկուի:
—Սպանո-ամերիկեան պատե-
կազմին մասնակցող հայ կամա-
ւորները իրենց տեղերը վերա-
դարձած են: Ասոնցմէ մէկը որ
զրահաւորի մը մէջ կը ծառայէր
իւր թնդանութեամբ, եօթն ան-
գամ շարունակ նշանակէտի զար-
կեր և մեծ աւերում առաջ բե-
րեր է: Ծովակալը այս ագթիւ-
րներ է հայ նաւազին «քանի որ
հայերը այսպիսի զաւակներ կը
ծնին, արժանի են ազատու-
թեան»:
—Մանչէսթրի մէջ, խումբ մը
երիտասարդներու ձեռքով սկսած
է հրատարակուիլ Վաղուան Ձայ-
նը անունով աղգային և գրական
նոր ամսաթերթ մը: Յաջողու-
թիւն կը մաղթենք:

ԿԱՅՈՐ ԵՒ ԿԱՅՈՐՈՒՇԻՆ

—)(—

Էլիզապէթ կայսրուհին յու-
ղարկաւորութեան ամենէն սրտա-
շարժ պարագայն անշուշտ այն է
ուր կայսրը իր տախալախ լծակ-
ցին դադարէն առջեւ գտնուեցաւ
այն պահուն երբ թափօրը Հով-
պուրկ կը հասնէր:
Փրանց ժողէֆ և արքայական
դերդաստանին անդամները մատ-
րան մօտ կեցած էին յուզ-
ուած և արտասուագին: Ձանգակ-
ներուն տխուր զողանքը սեւ քո-
ղերով ծածկուած գրտահիններուն
հեծեծանքներուն կը խառնուէր:
Կարի սրտաշարժ եղաւ այն վայր-
կեանը երբ կայսրը դէմ առ դէմ
գտնուեցաւ այն դադարէն որ
գեթախտ կայսրուհին մարմինը
կը պարունակէր: Նախ յուսահա-
տութիւնով բազուկները տարա-
ծեց, յետոյ լալով իր գլուխը
դադարէն վրայ դրաւ:
Երբ որ մատրան մէջ կուկրնդ-
րէր մահուան տխուր մեղեդիները
զորս առաջին անգամ լսած էր իր
նոտօլֆ որդւոյն յուղարկաւորու-
թեան ատեն, կայսրը ցաւէն
կքեցաւ, իր փղոսկրի պէս սրժ-
գոյն դէմքը յուզման ազդեցու-
թեան տակ գունաւորուեցաւ:
Մատուրէն մեկնելէն առաջ եր-
կու անդամ գրկեց դադարը,
վերջը կառք հեծնելով Շէօն-
պուրն մեկնեցաւ իր երկու աղ-
ջիկներուն ընկերակցութեամբ:
Հոն ուր կը խօսուի զօհին վրայ,
չմոռցուի մարդասպանը: Լու-
ջէնի միշտ բանտն է և կը շա-
րունակէ իր սինիք ընթացքը:
Խտալական թերթի մը խմբագիրը
զինքը տեսնելու գացեր է հար-
ցաքննիչ դատաւորին ընկերակ-
ցութեամբ: Մարդասպանը խցի-

ՆԱՀԱ-ՊԵՏ

—)(—

կին մէջ վեր վար կը պտտէր ժպտելով՝ այլ զրգուռած։ Խոսակցութեան միջոցին խմբագրիւրը հարցուցեր է նաև թէ իր ունեւորը նույնպէս չէ՞ր գտնուիր քաղաքականութեան հետ ապրող, հիւանդ և տարիքոտ կին մը սպանած ըլլալով։

— Այ, պատասխաններ է Լուչէնի. զայն սպաննցի որովհետեւ չէր աշխատեր. և ես չէի ուղեր անոր տեղ աշխատիլ։ Իմ իտէ-ալիս համար գործեցի. անիշխանական մըն եմ։

— Բայց անիշխանականներէն շատերը կը քամահրեն ձեր արարքը։

— Միայն իմ անիշխանականութիւնս արգար է։

Այս է եղած Լուչէնիի վերջին բառը։

ԲԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ

ՎԵՐԱԲՆՆՈՒԹԻՒՆ

Առանց սկանչ կախուլ Բազէնեար, Չիւրլէնտէն և Թիլէ նախարարներուն հրաժարման և ասոնց պնդումներուն թէ Տրէյֆիւս անպատճառ մեղադարար է և պէտք չէ այդ խնդրին վերադառնալ, ֆրանսական կառավարութիւնը քաջաբար որոշում տուաւ արտարականին դատը վերաքննելու։ Այս վերաքննութիւնը ի հարկէ Տրէյֆիւսի բացարձակ անմեղութիւնը չենթադրեր, բայց այնքան կեղծարարութիւններու, խոստովանութիւններու և մանաւանդ էսթէրհազիի փախուստին հետեւանքով անխուսափելի կը դառնար։ Կրտսի թէ ֆրանսական կառավարութիւնը արդէն յատուկ շոգեկան մը շրջեր է Սատանաի կղզին Տրէյֆիւսը Ֆրանսա փոխադրելու համար։ Ինչպէս զրած էինք, դատական ամբողջ թղթերը յանձնուած են նոցա կազմ յանձնաժողովին, որ զանոնք քննութեան մը մանրակննիւն բովէն անցնելէ ետքը, վճռարեկ ատենին պիտի փոխանան։

Գալով էսթէրհազիին, կրտսի թէ արդէն Լոնտրա կը գտնուի և թէ անձանաչելի դառնալու համար ծպտած ու պիտի ստիպուած է։ Խմբագրի մը յայտարարեր է թէ իր երկրին մէջ ա՛լ արդարութիւնը գոյութիւն չունի իրեն համար և թէ ժամանակը հասած է յայտնութիւններ ընելու, ցուցնելու համար թէ ինք ինչ դեր կատարած է Տրէյֆիւսի գործին մէջ։

ԹՐԲԱԿԱՆ ԿՈՊՏՈՒԹԻՒՆ

Ֆէնէրի նորակառոյց պուլկարական եկեղեցիին օժման հանդէսը տեղի ունեցած է ամսոյս Տին։ Այս առթիւ Պուլկարիոյ զանազան քաղաքներէն բազմաթիւ պուլկարներ մասնաւոր շոգեկառքեր և շոգեկաններ սարքած էին այս արարողութիւնը տեսնելու համար Պուլիս երթալու։ Բայց, մարդս կը մտադրէ... Թուրքը

կը արամադրէ։

Այս լուրը ստանալով Գուրիս-կոյն ծանուցագրած է Պուլկար պուլկար գործակաատարին թէ չկրնար ընդունիլ այդ այցելուները և թէ միայն քսանի չափ բարձրատիճան եկեղեցականներու և երեւելիներու մուտքը կարտօնէ։

Թէեւ գործակաատար Պ. Մարքով անմիջապէս պատասխանած է խնդրելով որ արտօնութիւնը չը զլացուի, որովհետեւ այս մերժումը կրնար Պուլկարիոյ և Թուրքիոյ բարի յարաբերութիւնները խորապէս պղտորել, և սակայն արդիւնք մը չէ տեսնուած։ Թուրքական կոպտութիւնը յաղթանակած է և պուլկարները չեն կրցած մտադրուած ճամբորդութիւնը կատարել։

Կ Ր Լ Տ Է

Բանեան այցելող թղթակից մը կը տեղեկագրէ թէ քաղաքը այժմ հանգարտ է, բայց խռովութիւններու հետքերը ամէն քայլափոխի ցոյց կուտան թէ որ աստիճանի հասած էր թուրք խռովումներին կատաղութիւնը։ Եւ ոչ մէկ քրիստոնեայի տուն կանգուն չէ մնացած։ Բաղաքին մէջ պարզ պտոյտ մը կը բուսէ բացորոշ կերպով ապացուցանելու թէ թուրք իշխանութիւնները մեղադրուած են հրճութիւններու և շարժերու մէջ։ Չախոյ վարպետորդութիւնը։ Թուրքը այս խռովութիւններուն տեղի տալով, գուցէ եւրոպայի հասկցնել ուղած է թէ կղզիին մէջ օսմանեան նոր ուժերու պէտք կայ, հանգարտութիւնը անվթար պահպանելու համար։ Առտի շատ վրդովուցաւ երբ այս խռովութիւնը բուրդովին տարբեր արդիւնք տալով, Կրէտէի միւլիման տարրին զինաթափութեան, ամբողջ թուրք զինուորներու վտարման, քրիստոնեայ կառավարչի մը հաստատման, վերջապէս կատարեալ ինքնավարութեան մը պէտքը ա՛լ անխուսափելի դարձուց։

Այսպէս, Դրան բոլոր առաջարկները մերժուած են։ Ո՛չ նոր թուրք զինուորներ պիտի ընդունուին և ոչ պիտի կազմուի քննիչ խառն յանձնախումբ մը ինչպէս Գուրը կը փախագէր։ Եւրոպան և մանաւանդ Անգլիան այս անգամ ինքնին կուզեն արդարութիւնը ի գործ դնել և գուցէ միանգամ ընդ միշտ խղել այն բարակ թելը որ տակաւին դժբախտ կղզին հարստահարիչներու իշխանութեան կը կապէ։

— Տարածայնութիւն կայ թէ թուրք զինուորներու և ապրտամբներու մէջ նոր ընդհարում մը տեղի ունեցեր է Գանտիաի մտերմը։ Գանի մը քրիստոնեայներ մեներ և վիրատորուեր են։

— Հազարի չափ պաշարպօղոքներ, որոնք Գանտիաէն արտաքսուած էին, խմբուեր են ոչ շատ հեռու անգլիական յառաջապահ

ներէն որոնք վտանգի տակ են կըստի։

— Անգլիական իշխանութեանց յանձնուած գերիններուն թիւը 50ը կանցնի։ Ասոնք առ այժմ վանաղան նաւերու մէջ բանտարկուած պիտի մնան մինչեւ որ տարուին միջազգային դատարանին առջեւ։

— Մոնթէնէկոցի ոտտիկանները, ուս պահակաղուէղը զօրացնելու համար, Բանէէն Բէթիմո մեկնած են, որուն Մահմէտական ընկերներուն մէջ վերագովիչ Էտուզեուում մը սկսած է նշմարուիլ։

ՄԻԹԻՆԿ ԿՐԸ

Ֆրանսաի ամէն կողմերը գըտնուող Ալլաա-Լօռէնցիները, Չարին առաջարկին առթիւ, վերջերս կարեւոր միթինկ մը գումարած են Բարիզի մէջ։ Ժողովը սա եղրակացութեան յանգեր է թէ, Ալլաա-Լօռէնցիները ախեղերական խաղաղութեան և ժողովուրդներու եղբայրակցութեան տենչալով հանգերձ, երբեք չեն կրնար ընդունիլ այնպիսի կարգադրութիւն մը որ իրենց երկրին խնդիրը արգարօրէն և վերջնական կերպով չի լուծէ։ Եւ, միթինկի կարծիքով, այս լուծման միակ պարզ և բանաւոր եղանակն է, եւրոպայի ընդհանուր խաղաղութեան սիրոյն համար, Ալլաա-Լօռէնց վերադարձնել իր մօր, Ֆրանսաի։

Միթինկի որոշումը ամբողջ Ֆրանսաի քաղաքավարական մերժումի մը անկեղծ պատասխանը չէ՞ Մուրադիէվի առաջարկին։

ԻՍՈՒՆ ԼՈՒՐԵՐ

Իսկիւպէն կը ծանուցանեն թէ լուրջ կռիւներ տեղի ունեցեր են երկու մահմետական ալպանիացի յեղբուր մէջ։ Եւրոպայի զեռ անձանօթ է։

— Հոռովմէն կը հեռագրեն թէ Վէլուֆի բորբոքումը հետզհետէ կաւելնայ։ Դիտարանը վտանգի մէջ է։ Բազմաթիւ շաղանակներ են արթած են։

— Պեռլինի մէջ սաստիկ հալածանք մը սկսած է անիշխանականներու և բոլոր կասկածելի օտարականներու դէմ։ Ամեն մարդ սկսած է իր գլխէն վախնալ։

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Տ. Թ. Թ. Լօռէնս. — Կը շնորհաւորենք ձեզի որ օրական 10 ու կէս ժամուան սոժանիկի աշխատանքէ մը ետքը, ժամանակ կը գտնէք արտասանմանի հայ թերթերէ թարգմանութիւններ ընելով ամերիկեան լրագրիներու մէջ հրատարակել տալ։

— Տ. Չ. Գ. Չըլի. Չեր Մընի Օոտը ստացանք։

— Լ. Ե. Պօթըն. Այդ անձին արարքներուն վրայ չափն աւելի գրուեցաւ։

— Տ. Փ. Գահիրէ. — Չարաչար կը սխալիք ձեր ենթադրութեան մէջ։

—)(—

ԱՂՋԿԱՆՑ ԿՐԹԱՐԱՆ

ԳԻՇԵՐՈՅԻԿ ԵՒ ՇԵՐԵԿԵԱՑ

Վայժարանը իր երկրորդ ասարթը չըջանը կսկսի յառաջիկայ երկու շաբթի Սեպտ. 7ին։ Իր ուղղութիւնը անցնալ տարիէն ծանօթ ըլլալով պատուայ ժան ծնողաց, աւելորդ կը համարի կրկնել զայն։

Միայն թէ այս տարի փոխադրուած է նոյն շէնքէն հինգ տուն վեր։

Մասնաւոր սեսակցութիւնք իր կատարուին ամեն տաւուս և բոլոր կան ժամը 9—12։

Տնօրէնութիւն

Գ. րգ Ուչաւտ Բ. Լինիա Ն. 40

Յ. Գ. Հրապարակին վրայ պատու գրոյցները անտեղի են։

ՎԱՐԳՈ

ԵՐԿՈՒ ՍԷՐ (ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒԿԱԿԱՆ ԿԵԱՆԿԻՆ)

—)(— (Գին 1 Ֆրանգ)

Մնացած սակաւթիւ օրինակներ կը ծախուին Վառնաի մէջ Շարժումի խմբագրատունը, Ֆիլիպէ՛ Տ. Անտոնի կոչի մօտ, Ռուսուլօք՝ Հայկ Մայրի եանի սրճարանը, Սօֆիա՛ Տ. Մուլի Արժմուհիի քով։

Մօտերս մամուլին կը յանձնուին նոյն հեղինակին «Բանութեան» գրքերը։

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Կուզէ՞ք վաճառուան լաւ պաշտօնեայ մը. զիմեցէք Շարժումի խմբագրութեան, որ ցոյց կուտայ և երիտասարդ մը որ ինք արիւն փոխ կառավարական պաշտօն կը վարէ և սովորակալութեան ճիւղին համար Վառնայի առեւտրական գրասենեկի վկայուած է։

ՊՕՐՍԱ

Վառնա 10 Սեպտեմբեր

ՊՈՒՂՏԱՑ

Վազօն, լիպրա 55—58, հէքթար 9.20—9.80 ֆրանկ

Արապա, լիպրա 55—60, հէքթար 9—12 ֆրանկ

ԱՐԲԱ

Լիպրա 42—50, հէքթար 5.20—6.00 ֆրանկ

ԵՈՒՂԱՑ

Կիւնտէ 8—10 արապա կէլմէքտէ տի 4—4.40 ֆրանկ

ՏԱՐԸ

Կիւնտէ 5—6 արապա կէլմէքտէ տի 58—60 լիպրա, 4.60—5 ֆրանկ

ՖԱՍՈՒՂԵԱ

Կիւնտէ 70—80 արապա կէլմէքտէ տի 100 օգգասը 15—21 ֆր. մալա կէլմէքտէ

Առապա մուսալէլէսի նարթօն

Ֆրանք հիսապը իլէ տիբ.

Կիւնտէ 15—20 վազօն, 200—250 արապա պուղտայ, 70—80 արապա արբա կէլմէքտէ տիբ.

ԽՄԲԱԿՐՈՒԹԻՒՆ «ՇԱՐՇՈՒՄ»

—)(—

Կը տպագրուին ամէն շաբաթ, հասցէտոմս, կազմուի, հարսանեկան հրատարակիչ, մահալոգ, ինչպէս պրօշիւններ։

Գիներն յոյժ դիւրամատչելի են։ Ուրիշ քաղաքներէ կազմուի յանձնարարութիւններ ձեռք բերուած և փութով կը կատարուին։

Печанница «Взаимность» Варна